

Հարց 1. Ո՞վ է համարվում հաշմանդամ անձ

Հաշմանդամ է համարվում այն անձը, ով առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն:

Հարց 2. Ո՞ր մարմինն է սահմանում անձի հաշմանդամությունը

Անձի հաշմանդամությունը սահմանում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը, որն էլ համարվում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինը:

Հարց 3. Որտե՞ղ և ինչպե՞ս դիմել հաշմանդամ ճանաչվելու համար:

Հաշմանդամ ճանաչվելու համար պետք է դիմել մշտական բնակության վայրի պոլիկլինիկա, որտեղ, անհրաժեշտ հետազոտություններ կատարելուց հետո, կլրացվի 88 ձևը և կներկայացվի տարածքային բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով(ԲՄՓՀ): Կրկնակի փորձաքննության դեպքում հաշմանդամը կարող է անմիջապես դիմել ԲՄՓՀ:

Հարց 4. Ի՞նչ կարգավիճակ է տրվում հաշմանդամ ճանաչված անձին և ինչ ժամկետով:¹

Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին տրվում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ, իսկ մինչև 18 տարեկան երեխաներին՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ: Հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի ժամկետով, երկու տարի ժամկետով, մինչև 18 տարին լրանալը և անժամկետ:

1-ին խմբի հաշմանդամությունը սահմանվում է երկու տարի ժամկետով, 2-րդ և 3-րդ խմբերի հաշմանդամությունը՝ մեկ տարի ժամկետով, իսկ "Հաշմանդամ երեխա" կարգավիճակը՝ երկու տարի ժամկետով կամ մինչև 18 տարին լրանալը:

Հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ՝

ա) 63 տարին լրացած անձանց,

բ) վերականգնողական միջոցառումների հեռանկարի բացակայության, հաշմանդամի սոցիալական անբավարարության վերացման կամ նվազեցման անհնարինության դեպքերում,

գ) իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որը բերում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտության,

դ) մեկ ակնազնդի կամ մեկ աչքի տեսողության անվերադարձ բացակայության դեպքում:

Հարց 5. Ի՞նչ է բժշկասոցիալական փորձաքննությունը:²

Բժշկասոցիալական փորձաքննությունը դա հիվանդության, խեղման կամ վնասվածքի հետևանքով օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումներով պայմանավորված կենսագործունեության սահմանափակումների գնահատման հիման վրա վերականգնման և սոցիալական պաշտպանության տեսակների որոշումն է:

Հարց 6. Ի՞նչ է հաշմանդամների սոցիալական պաշտպանությունը:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանություն՝ տնտեսական, սոցիալական և իրավական միջոցառումների համակարգ, որը հաշմանդամների համար ապահովում է կենսագործունեության

¹ 02.05.2003 ՀՀ կառավարության № 780-Ն որոշման հավելված

² 02.03.2006 ՀՀ կառավարության № 276-Ն որոշում «բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգի հաստատելու մասին»

սահմանափակումները հաղթահարելու, փոխարինելու (փոխհատուցելու) պայմաններ և ուղղված է հասարակական կյանքում նրանց մասնակցության համար մյուս քաղաքացիներին համարժեք հնարավորությունների ապահովմանը:

Հարց 7. Ի՞նչ է հաշմանդամների վերականգնումը և ինչպես է այն իրականացվում:³

Հաշմանդամների վերականգնումը ներառում է բժշկական, մասնագիտական և սոցիալական միջոցառումները, որոնք ուղղված են հաշմանդամի կենսագործունեության սահմանափակման վերացմանը կամ հնարավորինս փոխհատուցմանը:

Հաշմանդամների վերականգնումն իրականացվում է հաշմանդամների վերականգնման անհատական ծրագրին համապատասխան:

Հարց 8. Ի՞նչ է հաշմանդամների վերականգնման բազային ծրագիրը:

Հաշմանդամների վերականգնման բազային ծրագիրը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող, հաշմանդամներին անվճար տրամադրվող նվազագույն վերականգնողական միջոցառումների, մատուցվող ծառայությունների, հատկացվող տեխնիկական և օժանդակ միջոցների երաշխավորված ցանկ է:

Հարց 9. Արդյո՞ք հաշմանդամին տրամադրվում են պրոթեզա-օրթոպեդիկ պարագաներ

Հաշմանդամին պրոթեզա-օրթոպեդիկ պարագաներ տրամադրվում են հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագրին համապատասխան: Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով և վերականգնողական պարագաներով ապահովումը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման կարգը պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ, միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու մասին» 2007թ. ապրիլի 12-ի N453-ն որոշմամբ:

Հարց 10. Ու՞մ է տրամադրվում հաշմանդամի սայլակ և որ՞ մարմնին պետք է դիմել հաշմանդամի սայլակ ստանալու համար:

Հաշմանդամի սայլակներ տրամադրվում են առաջին խմբի հաշմանդամներին և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաներին՝ ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմնի եզրակացության հիման վրա: Հաշմանդամի սայլակ ստանալու համար անհրաժեշտ է դիմել բնակության վայրի ՀՀ ԲՍՓ գործակալության տարածքային մարմին:

Հարց 11. Որտեղի՞ց, ինչպե՞ս և ի՞նչ ժամկետով հաշմանդամը կարող է ստանալ սայլակ: Հաշմանդամը կամ նրա ներկայացուցիչը հաշմանդամի սայլակ ստանալու համար պետք է դիմի ՀՀ ԲՍՓ գործակալության վերականգնողական բաժին /հասցեն՝ Արմենակյան 129/, ներկայացնելով՝ անձնագիր /ներկայացուցիչը նաև իր անձնագիրը/, հաշմանդամի հաշմանդամությունը հավաստող վկայականի պատճենը և ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության /ԲՍՓ/ գործակալության տարածքային մարմնի եզրակացությունը՝ սայլակի անհրաժեշտության վերաբերյալ: Բաժնում կնքվում է պայմանագիր և նշված պայմանագրով «Պրոթեզաօրթոպեդիկ» ՓԲԸ-ում /հասցեն՝ Ծարավ աղբյուրի 55 ա/ հաշմանդամին տրամադրվում է սայլակ: Հաշմանդամը սայլակն ստանում է չորս տարի ժամկետով:

³ 14.04.1993 «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի հոդված №8,9

Հարց 12. Ու՞մ է տրամադրվում լսողական սարք ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին

Լսողական սարք տրամադրվում է հաշմանդամներին և տարիքային կենսաթոշակառուներին համապատասխան բժշկական փաստաթղթերի հիման վրա:

Հարց 13. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ և ու՞մ պետք է դիմել լսողական ապարատ ստանալու համար

Լսողական ապարատ ստանալու համար անհրաժեշտ է լսողության (սուրդողոգիայի) հանրապետական կենտրոնից վերցնել լսողական ապարատի տեսակի մասին տեղեկանք և դիմումով ներկայանալ սոցիալական ծառայության տարածքային գործակալություն:

Հարց 14. Որտեղի՞ց, ինչպե՞ս և ի՞նչ ժամկետով հաշմանդամը կարող է ստանալ լսողական սարք

Երևան քաղաքում հաշմանդամը լսողական սարք ստանում է ՀՀ ԲՍՓ գործակալության վերականգնողական բաժնից /հասցեն՝ Արմենակյան 129/, իսկ մարզերի հաշմանդամները՝ տարածքային ԲՍՓՀ-ներից, ներկայացնելով անձնագիր, հաշմանդամի հաշմանդամությունը հավաստող վկայականի պատճենը, ատոլոմետրիկ հետազոտություններ իրականացնող բժշկական հաստատության եզրակացությունը:

Հաշմանդամը լսողական սարքն ստանում է չորս տարի ժամկետով:

Հարց 15. Արդյո՞ք հաշմանդամները իրավունք ունեն ստանալու անվճար բժշկական օգնություն և սպասարկում:

Պետական պատվերի շրջանակներում հաշմանդամներն իրավունք ունեն ստանալ անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացիոնար բուժօգնություն և պոլիկլինիկայում:

Հարց 16. Ի՞նչ արտոնություններից են օգտվում հաշմանդամները

Համաշխարհային երկրորդ պատերազմի հաշմանդամ վետերաններն օգտվում են՝

ա/ կոմունալ ծառայությունների գծով՝ բնակարանի, աղբահանության, հեռախոսի և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու արտոնությունից,

բ/ պետական պատվերի շրջանակում անվճար բուժօգնություն և բուժսպասարկում, այդ թվում՝ դեղորայք ստանալու արտոնությունից

գ/ Համաշխարհային մեծ պատերազմի վետերանները՝ ԱՊՀ անդամ երկրների տարածքում արտոնյալ պայմաններով, տարին մեկ անգամ, կտրոններով երթևեկելու արտոնությունից:

Հարց 17. Ովքե՞ր կարող են ստանալ տնային պայմաններում սոցիալական սպասարկման ծառայություն

Տնային պայմաններում սոցիալական սպասարկման ծառայությունից կարող են օգտվել ծերության սոցիալական կենսաթոշակային տարիքի հասած, այսինքն՝ 65 և բարձր տարիքի միայնակ կենսաթոշակառուները և միայնակ չափահաս, այսինքն՝ 18 և բարձր տարիքի հաշմանդամները՝ դիմելով «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» (Հարավ-Արևմտյան Բ-1 թաղամաս, հեռ.՝ 74-04-02):

Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ տրամադրվում են 4 տուն-ինտերնատների և «Տնային պայմաններում միայնակ տարեցների և

հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնի» կողմից: Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո գործում է 4 տուն-ինտերնատ՝ 3-ը ընդհանուր տիպի (Երևանի Նորքի, թիվ 1 և Գյումրիի տարեցների և հաշմանդամների) և մեկը՝ հատուկ (հոգեբուժական տուն-ինտերնատ):

«Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն»

«Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնը» սպասարկում է 1200 սպասարկման կարիք ունեցող միայնակ տարեցների (սոցիալական կենսաթոշակային տարիքի հասած) և 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամների՝ անկախ տարիքից: Կենտրոնը մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- Կենցաղային սպասարկում և խնամք
- Բժշկական օգնություն
- Սոցիալ - հոգեբանական օգնություն
- Իրավաբանական խորհրդատվություն:

Հարց 18. Ո՞ր իրավական ակտով են սահմանված հաշմանդամ դարձած զինծառայողների կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները և չափը

Հաշմանդամ դարձած զինծառայողների կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները և չափը սահմանված են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով:

Հաշմանդամության կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված զինծառայողներին, եթե նրանք հաշմանդամ են ճանաչվել՝

ա) զինվորական ծառայության ընթացքում.

բ) ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո 5 տարվա ընթացքում, սակայն ծառայության ժամանակ ծագած հիվանդության, վնասվածքի կամ խեղման պատճառով, այդ ժամկետից ուշ, սակայն ծառայության ժամանակ ստացած վնասվածքի հետեւանքով ծագած հաշմանդամության պատճառով:

Հաշմանդամության կենսաթոշակի իրավունք տվող պատճառներն են զինվորական ծառայության ժամանակ ստացած վնասվածքները, խեղումները եւ հիվանդությունները:

Զինծառայողների հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է հետեւյալ չափերով՝

ա) 1-ին խմբի հաշմանդամներին՝ ամսական դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով, բայց ոչ պակաս ՀՀ օրենսդրությամբ սահմանված բազային կենսաթոշակի 200 տոկոսից.

բ) 2-րդ խմբի հաշմանդամներին՝ ամսական դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 60 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային կենսաթոշակի 150 տոկոսից.

գ) 3-րդ խմբի հաշմանդամներին՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 40 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային կենսաթոշակից: